

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02–«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական ատոհմանի հայցման համար Միքայել Հենրիխի Ավանեսյանի «Թուրքիայի աշխարհառազմավարության էներգատրանսպորտային գործոնը Մեծ Մերձավոր Արևելքում. փոխակերպումները և նոր մարտահրավերները» ատենախոսության վերաբերյալ

Մ. Ավանեսյանի հանրային պաշտպանության ներկայացված ատենախոսության թեման բավականին արդիական է քաղաքագիտական հետազոտությունների հիմնահարցերում: Գիտարկվում են Մեծ Մերձավոր Արևելքում Թուրքիայի հիմնական նախաձեռնությունները էներգատրանսպորտային ոլորտում, վերլուծվում են բազմաթիվ կիրառական նշանակություն ունեցող հարցեր: Էներգետատրանսպորտային անվտանգության ոլորտում ժամանակակից իրողությունների դրույթների ընկալումը բավականին կարևոր է ռազմավարական մտածողության ձևավորման համատեքստում: Թուրքիան, որպես տարածաշրջանի զարգացած արդյունաբերական երկիր, ձևավորում է աշխարհառազմավարական ազդեցության սեփական հայեցակարգային օրակարգը: Իրականում իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության ռազմավարական մոտեցումը էներգատրանսպորտային աշխարհառազմավարության ոլորտում սերտորեն փոխկապակցված է ներքին քաղաքական հարցերի, երկրի ողջ հասարակական կյանքի սուվերենացման հետագա միտման հետ:

Ատենախոսության հեղինակը թեման ներկայացնում է բավականին հայեցակարգային և վերլուծականորեն հիմնավորված: Թուրքիայի էներգատրանսպորտային ոլորտի գիտական իմաստավորումը անհրաժեշտ է՝ նաև ելնելով ՀՀ-ի արդի անվտանգային մարտահրավերներից և իրողություններից: Աշխատանքի իմաստային հիմնահարցերը նախաձեռնում են համապարփակ միջառարկայական դիտարկում՝ քաղաքագիտական ուսումնասիրությունների շրջանակներում:

Ատենախոսին հաջողվել է լուծել իր առջև դրված մի շարք հետազոտական խնդիրներ, մասնավորապես.

- Ուսումնասիրվել են Թուրքիայի պետական եւ ազգային ռազմավարությունների լայն շրջանակ, որոնք բացահայտում են Թուրքիայի գործող իշխանությունների նկատառումները: Ռազմավարական փաստաթղթերի ուսումնասիրությունը լիովին համապատասխանում է նշված թեմատիկայի բացահայտմանը, թույլ է տալիս արտացոլել Թուրքիայի կառավարության նախատեսվող ծրագրերը: Նշված ռազմավարությունները սահմանում են պաշտոնական Անկարայի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական ուղենիշները, համապատասխանաբար ձևավորում են Թուրքիայի էներգատրանսպորտային աշխարհառազմավարության արժեքային և հեռանկարային ուղղությունները:
- Բացահայտվել են Թուրքիայում էներգատրանսպորտային հանգույցի («խարային») ձևավորման առանձնահատկությունները: Թուրքիայի կառավարության ջանքերը կառավարման վերջին քսան տարիների ընթացքում միտված են եղել տարբեր նշանակության խոշորագույն լոգիստիկ ենթակառուցվածքների ստեղծմանը: Ատենախոսության հեղինակը խորապես վերլուծել է սույն հարցը, ուսումնասիրել է տարբեր ինտեգրացիոն նախաձեռնություններ:
- Գնահատվել և վերլուծվել են Թուրքիայի ներքին նշանակության հիմնական էներգետիկ նախագծերը: Մասնավորապես, ատենախոսության հեղինակը վերլուծել է հորատման նախագծերը Սև և Միջերկրական ծովերի բացառիկ տնտեսական գոտիներում, վեր հանել դրանց գործնական բաղադրիչը: Բացի նավթագազային ոլորտից, հեղինակը դիտարկում է Թուրքիայի միջուկային էներգետիկան:
- Դիտարկվել են Թուրքիայի էներգետիկ տրանսպորտային աշխարհառազմավարության հիմնական աշխարհագրական ուղղությունները:
- Քննարկվել են Թուրքիայի էներգատրանսպորտային աշխարհառազմավարության հիմնական գաղափարական ուղղություններն ու հեռանկարները:

Ատենախոսությունն ունի հարուստ գիտական և աղբյուրագիտական հենք, հանգամանորեն ուսումնասիրվել են թեմայի հետազոտության հետ կապված տեսական առկա մոտեցումներն ու հիմնական գիտական ու պաշտոնական աղբյուրները: Սեղմագիրը ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը՝ հանդիսանալով դրա հիմնական դրույթների արտացոլում:

Միաժամանակ, ատենախոսությունը զուրկ չէ նաև որոշ բացթողումներից ու թերություններից: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

1. Ատենախոսության հեղինակը ներկայացնում է Թուրքիայի էներգատրանսպորտային դիվերսիֆիկացված քաղաքականությունը: Այնուամենայնիվ, աշխատանքը կշահեր, եթե հեղինակը մատնանշեր գործնական քաղաքական քայլերը (օրինակ, Ռուսաստանի հետ վեճը նավթագազային աղբյուրների գնային քաղաքականության վերաբերյալ):
2. Հեղինակը բազմիցս ընդգծում է, որ Թուրքիայի էներգատրանսպորտային աշխարհառազմավարության մեջ կենտրոնական դիրք է զբաղեցնում "Միջին միջանցքը": Սակայն էներգետիկ ոլորտում հեղինակը սահմանափակվում է միայն Ադրբեջանից և Ռուսաստանից նավթագազային մատակարարումների առաջնահերթության արձանագրմամբ: Անհրաժեշտ էր անդրադառնալ նաև Քաթարի և Իրաքի կարևորությանը Թուրքիա նավթի և գազի մատակարարումների գործում, նրանց դերը երկրի հաշվեկշռի մեջ: Նաև որպես Թուրքիայի աշխարհառազմավարության "հաբային" թեզի մարտահրավեր հողինակը կարող էր ուշադրություն դարձնել նաև Աֆրիկայից Եվրոպա գազի մատակարարման այլ մրցակցային նախագծերին, օրինակ՝ "GreenStream" - ին և "Medgaz" – ին:
3. 2.4 ենթագլխում հեղինակը ուսումնասիրում է Մեծ Մերձավոր Արևելքում էներատրանսպորտային անդրազգային կառույցների ազդեցության տարբեր գնահատականներ: Հարկ ենք համարում նշել, որ հեղինակը կարող էր ներկայացնել նաև տվյալ ոլորտում աշխատող թուրքական ընկերությունների ակտիվությունը (օրինակ՝ "Margün Enerji", "Petrol Ofisi A. Ş.", "Kolin", որը ճանապարհներ է կառուցում

